

Տեղի ունեցավ Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի միջոցառումների կազմակերպման մարզային հանձնաժողովի հերթական նիստը

29.04.2015

Տեղի ունեցավ Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի միջոցառումների կազմակերպման մարզային հանձնաժողովի հերթական նիստը Ապրիլի 29-ին Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի միջոցառումների կազմակերպման Գեղարքունիքի մարզային հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը: Նիստի ընթացքում հանձնաժողովի անդամ, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Գարիկ Բադալյանը մասնակիցներին ներկայացրեց մարզային միջոցառումների ծրագրի շրջանակներում կյանքի կոչված եւ իրականացվելիք միջոցառումների ցանկը: Մասնավորապես հանձնաժողովի կողմից ճշգրտվել է մարզի բոլոր տարածքներում ապրող Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների անվանացանկը, հանրակրթական դպրոցներում պատրաստում են 70-ամյակը խորհրդանշող պատի թերթեր, վահանակներ, դպրոցականների շրջանում անցկացվել են 'Մենք հաղթանակի սերունդներն ենք' թեմայով շարադրությունների մրցույթներ, արիության դասեր, ռազմամարզական, սպորտային եւ տարաբնույթ միջոցառումներ: Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում թարմացվում են Մեծ Հայրենականի մասնակիցների լուսանկարները, փաստաթղթերը , հուշամեդալները, անձնական իրերը, իսկ մարզի արվեստի եւ գեղարվեստի դպրոցներում կազմակերպվում են ձեռքի աշխատանքների, նկարների եւ քանդակների ցուցահանդեսներ: Մարզի համայնքներում շարունակվում են Մեծ Հայրենականի եւ Շուշիի ազատագրման հերոսամարտերում իրենց կյանքը նվիրաբերած հայորդիների հիշատակն հավերժացնող հուշածանների, հուշակոթողների, հուշահամալիրների տարածքների կանաչապատման եւ բարեկարգման աշխատանքները: Մարզային ծրագրի շրջանակներում ներառված մնացած միջոցառումները և կազմակերպչական բնույթի այլ հարցեր մարզի համայնքներում ու կրթամշակութային հաստատություններում կրում են շարունակական բնույթ: Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հանձնարարեց հետևողական լինել և բոլոր տեսակի միջոցառումները կազմակերպել ու անցկացնել բարձր մակարդակով, ամենայն պատասխանատվությամբ: